«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Գիտակրթական և մշակութային գործոնի դերը Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման գործում

Հեղինակ – Լալա Գալստյան

Դպրոց՝ Գեղակերտի միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3
ԳԼՈՒԽ 1. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ---6
ԳԼՈՒԽ 2. ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՈՐՊԵՍ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

2.1 Կրթական ավանդույթների առկայությունը----------
13 Եզրակացություն----------
---------18

Գրականություն----------
-19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Վերազինվում է հասարակական աշխարհա

գըրությունը և նրա կազմում հանդես եկող ինքնուրույն գիտական ուղղություններ-ը: Հասարակական կյանքի սոցիալ-մշակութային ոլորտը չափազանց բարդ, բազ մատարր ու բազմաշերտ բնագավառ է, որն անմիջական փոխազդեցության, ուղիղ ու հակադարձ կապերի մեջ է գտնվում հասարակական կյանքի մյուս ոլորտների հետ: Մագիստրական ատենախոսությունը նվիրված է հասարակական կյանքի սոցիա լական ոլորտին՝ Երկիր մոլորակի սոցիալական միկրոաշխարհագրական կառուց վածքի վերլուծությանը:Աշխարհագրականորեն այն ընդգրկում է Հայաստանի Հան րապետության վարչական միավորի՝ Շիրակի մարզի տարածքը, թեմայի առումով վերաբերում է նրա գիտակրթական և գիտամշակութային ոլորտին:Շիրակ աշխար-հը ու Գյումրին մեծ դեր են խաղացել հայ ժողովրդի գիտության, կրթության և մշա-կույթի զարգացման գործում:

Անկախ պետականության պայմաններում արդիական հնչեղություն ունի նրա աշ խարհագրական-տարածական ամեն մի միավորի (բաղադրիչի) ուսումնասիրութ յունը: Հենց դրանով էլ պայմանավորված է թեմայի հրատապությունն ու արդիակա նությունը:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է բացահայտել, ցույց տալ և բնութագրել գիտակրթական և գիտամշակութային գործոնի դերը ՀՀ վարչական տարածքային միավորի՝ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զար գացման գործում: Դրան հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ փոխկա պակցված խնդիրները.

•հիմնավորվել է գիտակրթական և գիտամշակութային գործոնների դերը որպես Շիրակի մարզի զարգացման կարևոր բաղադրիչ,

•ցույց են տրվել թե կրթական ավանդույթների առկայությունն ու գիտակրթական հիմնական կենտրոններն ինչ դեր ու նշանակություն են ունեցել մարզի սոցիալ տնտեսական զարգացման գործում,

•ներկայացվել է մարզի մշակութային բազմաշերտությունը, ազգային ավանդույթ ների և մշակութային բաղադրիչների ինքնատիպ պահպանվածությունը, •ցույց է տրվել, որ Շիրակը և հատկապես Գյումրին, հոգևոր և նյութական մշակույ-թի, սպորտային, արհեստների ու արվեստների յուրահատուկ կենտրոն է, ինչպես գյումրեցիներն են պատկերավոր ասում՝ սպորտի, արվեստի, արհեստի, հումորի, հյուրասիրության մայրաքաղաք,

•հիմնավորվել են շիրակցիների և գյումրեցիների լեզվամշակութային ինքնատիպ դրսևորումները, հումորն ու սուր խոսքը:

Հետազոտության մեթոդները: Մագիստրական ատենախոսության վրա աշխատե-լիս օգտագործել ենք համագիտական, համեմատական-աշխարհագրական, պատ-մա համեմատական, վիճակագրական, անալոգների, նկարագրական, անկետային հարցման և այլ մեթոդներ: Հիմնավորվել են աշխարհագրական հետազոտություն ներում գիտակրթական և մշակութային գործոնների դերն ու նշանակությունը, բա ցահայտվել են Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատ

կությունները:

Աշխատանքի գիտական նորույթը: Աշխատանքում հիշատակված խնդիրների մեթոդաբանությունն ու ստացված արդյունքներն ամբողջացնում են սույն հետազոտության գիտական նորույթը: Այն է.

•բացահայտվել են գիտակրթական և գիտամշակութային գործոնների և սոցիալ տնտեսական զարգացման կապերը Շիրակի մարզի օրինակով,

•հիմնավորել է, որ աշխարհագրական տարածքային միավորը՝ Շիրակի մարզն աչքի է ընկնում մշակութային բազմաշերտությամբ, ազգային ավանդույթների և մշակութային բաղադրիչների ինքնատիպությամբ,ինչը նպաստում է նաև զբոսաշրջության զարգացմանը,

•կատարվել է սոցիարցում և համեմատական վերլուծություն:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզը, նրա տարածական ասպեկտը՝ գիտակրթական և մշակութային գործունեության տարածքային կազմակերպումն է: Օբյեկտն ընդհանուր հասկացություն է, մինչդեռ առարկան նրա նեղ կողմն է:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերն են կազմում հասարակական աշխարհագրության վերաբերյալ հայտնի աշխարհագետների (Լ. Վալեսյան, Վ. Մաքսակովսկու և այլք) աշխատանքները: Ատենախոսության վրա աշխատելիս օգտվել ենք

Շիրակ աշխարհին, Գյումրի քաղաքին նվիրված Ղ. Ալիշանի, Հ. Մանանդյանի, Հ. Իսաբեկյանի, Կ. Կոզմոյանի, Մ. Նազարյանի, Տ. Խաչատրյանի և այլոց աշխատանքներից, Գյումրիի քաղաքապետարանի, Շիրակի մարզպետարանի նյութերից ու հաշվետվություններից, համացանցի նյութերից: Օգտագործվել են նաև ուսումնական ձեռնարկներ, մենագրություններ, հոդվածներ, վերլուծականներ, որոնց ցանկը ներկայացված է գրականության մեջ: Արգասաբեր է եղել հեղինակի կողմից Շիրակի մարզի գիտամշակութային կենտրոններ այցելելը, անձնական շփումները, անկետային հարցումները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Մագիստրական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, հավելվածից:

Ներածության մեջ տրվում է աշխատանքի արդիականությունը, աշխատանքի նպատակը և խնդիրները, հետազոտության մեթոդները, աշխատանքի գիտական նորույթը, հետազոտության օբյեկտը և առարկան,հետազոտության մեթոդաբանական հիմքը, աշխատանքի կառուցվածքը և ծավալը;

Առաջին գլխում տրվում է Շիրակի մարզի աշխարհագրական համառոտ բնութագիրը: Հետազոտության հիմնահարցերը քննարկվել են 2-րդ և 3-րդ գլուխներում: Երկրորդ գլուխը նվիրված է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում գիտակրթական գործոնի ունեցած դերին: Շիրակ աշխարհը վիթխարի ներդը-

րում ունի հանրապետության գիտության և կրթության ոլորտում: Այն գիտակրթա-կան հարուստ ավանդույթներով հայտնի մարզ է, աշխարհին գիտական հզոր աստ-ղաբույլ է տվել. Անանիա Շիրակացի, հայտնի ակադեմիկներ են հայր և որդի Ար-տաշես և Արամ Շահինյանները, Ալեքսանդր Թալալյանը, Արմեն և Գալուստ Գալո-յանները, Սերգեյ Համբարձումյանը, Գուրգեն Սահակյանը, Նորայր Առաքելյանը, Վարդգես Միքայելյանը, Սերգեյ Նազարեթյանը, Սարգիս Հարությունյանը, Նիկոլայ Հովհաննիսյանը, Սևադա Հովհաննիսյանը, Լեմվել Վալեսյանը, Կարլեն Ադամյանը, Սուրեն Շահինյանը, Հենրիկ Շաչատրյանը և այլք:

Երրորդ գլխում խոսվում է մշակութային գործոնի, որպես Շիրակի մարզի սո-ցիալ տնտեսական զարգացման կարևոր բաղադրիչի մասին: Այստեղ քննարկվել են մարզի մշակուային բազմաշերտությունը, ազգային ավանդույթների և մշակու-թային բաղադրիչների ինքնատիպ պահպանվածությունը, բնութագրվել է Շիրակը որպես մշակութային, սպորտային, արհեստների ու արվեստների յուրահատուկ կենտրոն: Ներկայացվել են շիրակցիների լեզվամշակութային ինքնատիպ դրսևո-րումները, հումորն ու սուր խոսքը:

Համընդհանուր ճանաչում ունեն ժողովրդական նկարիչներ Մարիամ և Երանու-հի Ասլամազյան քույրերը, Մինաս Ավետիսյանը, գուսան Շահենը, երգչուհի, հայկա-կան ռոմանսի թագուհի Վարդուհի Խաչատրյանը, Նիկողայոս Տիգրանյանը, Արմեն Տիգրանյանը, Շարա Տալյանը, գուսաններ Ջամալին և Շերամը, Զարուհի Դոլուխանյանը, Խաչատուր Ավետիսյանը, Գեղունի Չթչյանը, Ավետիք Իսահակյա-նը, Հովհաննես Շիրազը, Մկրտիչ Արմենը, Միեր Մկրտչյանը, Սերգեյ Մերկուրովը և շատ ուրիշներ:

ԳԼՈՒԽ 1

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ



Շիրակի մարզը գտնվում է ՀՀ հյուսիս-արևմուտքում , զբաղեց նում է 2680 կմ² տարածք, որտեղ 2016թ. տվյալներով ապրում է 252 հզ. մարդ,մարզկենտրոնն է Գյում րին (122 հզ. բնակիչ): Մարզն իր անունը ստացել է պատմական Հայաստանի Այրարատ աշխարհի Շիրակ գավառից, որն ավելի ըն դարձակ տարածություն է գրա վում, քան ներկա մարզը:

Շիրակի մարզը պետական սահ մանով արևմուտքից սահմանա կից է Թուրքիային (117 կմ), իսկ հյուսիսից՝Վրաստանի Հանրապե տությանը (48 կմ), արևելքից՝ ՀՀ Լոռու մարզին, իսկ հարավից՝ Հ Հ Արագածոտնի մարզին: Մարզը կազմավորվել է Արթիկի,Անիի, Ա խուրյանի, Աշոցքի և Ամասիայի նախկին վարչական շրջանների

1. Շիրակի մարզի ֆիզիկական քարտեզ միավորումից:

Գտնվելով հանրապետության հյուսիսարևմտյան մասում մարզն ունի եզրա-յին դիրք: Չնայած դրան նրա տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը (կառուցվել է մինչխորհրդային տարիներին) և ավ տոճանապարհը: Նրա միջոցով են միանում Հայաստանի և Թուրքիայի երկաթու ղային և ավտոճանապարհային ցանցերը, որոնք տասնամյակներ շարունակ չեն գործում: Իսկ ընդհատված կապի վերականգնման դեպքում կտրուկ կաճի մարզի տարանցիկ նշանակությունը: [26, էջ 294]

Մարզը ռելիեֆի առումով բաժանվում է երկու մասի՝ հրաբխային (Աշոցք-Ձա վախքի տարածաշրջան), որն իր մեջ ընդգրկում է Ձավախքի և Եղնախաղի լեռնա վահանները, իսկ հյուսիսում՝ Աշոցքի սարահարթը (2050մ) և Չլդրի լեռները: Ռելիեֆի, կլիմայի և ջրաերկրաբանական կառուցվածքի առանձնահատկութ յունների շնորհիվ Շիրակի մարզի տարածքն աչքի է ընկնում համեմատաբար թույլ

զարգացած ջրագրական ցանցով: Մարզի գետային ցանցը գրեթե ամբողջությամբ պատկանում է Արաքս գետի ավազանին:

Շիրակի մարզի տարածքում կազմավորվում և Արփի լճից սկիզբ է առնում Ա րաքսի ձախակողմյան վտակ Ախուրյան գետը՝ Կարախան, Գյումրի, Կարկաչուն,

Աշոցք վտակներով: Այն ունի 186 կմ երկարություն (մարզում՝105 կմ) և համարվում է մարզի ջրային հիմնական զարկերակը: Գետը սահմանային է ստորին և միջին հոսանքներում Թուրքիայի և ՀՀ միջև, որտեղ մակերևութային ջրերի պաշարնե-րը պահպանելու, կարգավորելու, տարածքի ոռոգումն ապահովելու նպատակով կառուցվել է Ախուրյանի (Թուրքիայի հետ համատեղ շահագործվող, ՀՀ-ում ամե նախոշորը՝ 525 մլն. մ³) ջրամբարը: [Տես՝ քարտեզ 1]

Շիրակի մարզն աղքատ է լճերով: Մարզի միակ խոշոր լիճը Արփի լիճ-ջրամ բարն է (ՀՀ-ում մեծությամբ երկրորդը), որն ունի տեկտոնահրաբխային կառուց վածք՝ 22 կմ² մակերեսով և 8 մ առավելագույն խորությամբ: Լիճ-ջրամբարը գըտ նըվում է Աշոցքի սարահարթում՝ 2025 մ բարձրության վրա: Մարզում կառուցված են մի շարք ջրամբարներ ևս՝ Մանթաշի, Կառնուտի, Թավշուտի, Սառնաղբյուրի, Սարալանջի, նաև բազմաթիվ ջրհան կայաններ: [35, էջ 195]

Մարզը կլիմայական պայմանների առումով բնորոշվում է բարեխառն լեռնային կլիմայով, որն աչքի է ընկնում տեղումների առատությամբ: Աշոցքի սարահար թում և նրա շրջակա լեռներում տարեկան մթնոլորտային տեղումների քանակը 700 մմ է, իսկ Շիրակի դաշտում՝ 500-550 մմ: Շիրակի մարզն աչքի է ընկնում զով ա մառներով և խստաշունչ, ձնառատ ու տևական ձմեռներով: Հունվարյան միջին ջերմաստիճանը՝ -9,8° է, իսկ ՀՀ բացարձակ նվազագույն ջերմաստիճանը գրանց-վել է Աշոցքում՝ Պաղակն (նախկին Շուրաբադ) բնակավայրում՝ -46°: Ամառը մարզի հարավում շոգ է ու չոր (+22°), իսկ հյուսիսում՝ զով (+15°):

Շիրակի մարզի բնական լանդշաֆտներն ի տարբերություն մյուս մարզերի միատարր են: Բնական անտառները այստեղ ամբողջովին բացակայում են: Մար-զում տիրապետողը լեռնային տափաստաններն են՝ հումուսով հարուստ սևահո-ղերով և հացազգի տարախոտային բուսականությամբ, որոնք բարենպաստ նա-խադրյալներ են ստեղծում հացահատիկային մշակաբույսերի, կարտոֆիլի, շա-քարի ճակնդեղի և այլ մշաբույսերի աճեցման համար: Մարզի բարձրադիր գոտի-ներում ընդարձակ տարածություններ են զբաղեցնում մերձալպյան և ալպյան ծաղկաշատ մարգագետինները, որոնք հյութալի արոտավայրեր են ծառայում խո-շոր և մանր եղջերավոր անասնպահության զարգացման համար:

Մարզի տարածքի երկրաբանական կառուցվածքի բազմազանության շնորհիվ բազմազան են նաև ընդերքի հարստությունները: Ուստի մարզում լայն տարա-ծում ունեն տուֆը, պեմզան, բազալտը, անդեզիտը, կրաքարը, պեռլիտը, հրաբխա-յին խարամը, զանազան կավերը և շատ ուրիշ շինանյութեր: Շինանյութերի մեջ ա ռաջնակարգ նշանակություն ունի տուֆը, որի պաշարներով Շիրակի մարզը հան րապետության մարզերի մեջ գրավում է առաջին տեղը: Մարզում առավել հայտնի են

Արթիկի, Անիպեմզայի, Պեմզաշենի և Գյումրիի տուֆի հանքավայրերը: Շիրակի մարզը հայտնի է նաև արդյունաբերական նշանակություն ունեցող կրաքարի, կա

վերի և դիատոմիտների պաշարներով: [31, էջ 123]
Վերջին հետազոտություններով ճշգրտված է, որ Շիրակի մարզի հյուսիսը մըտ նում է 9, իսկ կենտրոնն ու հարավը՝ 9-10 բալ և ավելի ուժգնություն ունեցող սեյս-միկ գոտիներում: Մարզի տարածքում և շրջակայքում, երկրաշարժային հայտնի էպիկենտրոններ են հանդիսանում Գյումրին, Սպիտակը, Անին, Կարսը, Ախալքա լակը: Մարզի տարածքին հատկապես մեծ վնաս պատճառած երկրաշարժերից հայտնի են 1319 թ.՝ Անիի, 1899թ.՝ Կարսի, 1868թ.՝ Գյումրիի, 1926թ.՝ Լենինականի, 1988թ.՝ Սպիտակի երկրաշարժերը: [8, էջ 317]
Բնակչությունը Շիրակի մարզուի կազմում է մոտ 252 հզ. մարդ: Գրեթե այդ-քան մարդ էր ապրում միայն Գյումրիում 1988 թվականին: Բնակչության խտու-թյունը բարձր է Շիրակի դաշտի առավել հարթ հատվածներում, որտեղ շատ են վարելահողերը: Այստեղ գտնվում է նաև մարզկենտրոն Գյումրին (122հզ. բնակիչ), որտեղ բնակվում է մարզի բնակչության գրեթե կեսը: Նոսր է բնակեցված մարզի հյուսիսը՝ Աշոցքի սարահարթը, որտեղ դաժան են բնակլիմայական պայմանները:
Մարզկենտրոն Գյումրի քաղաքն իր նշանակությամբ և բնակչության թվով հա մարվում է ՀՀ երկրորդ խոշոր քաղաքը: Այն մայրաքաղաք Երևանից հեռու է 127 կմ: Գյումրին Շիրակի մարզի վարչական, տնտեսական և մշակութային կենտրոնն ու տրանսպորտային հանգույցն է: Գյումրին գտնվում է ՀՀ և Թուրքիայի հետ պետա կան սահմանից ոչ շատ հեռու, Շիրակի դաշտի կենտրոնական հատվածում, Ա խուրյանի վտակ Գյումրի գետի ափին, Հայաստանը Թուրքիային կապող երկաթու-ղու
վրա, որը, սակայն, պետական սահմանի փակ լինելու պատճառով չի գործում: Գյումրիի կենտրոնական դիրքը Շիրակի մարզի տարածքում բարենպաստ պայ մաններ է ստեղծում կազմակերպիչ, համախմբող կենտրոնի գործառույթներ իրա կանացնելու համար: Այն քաղաքի կարգավիճակ է ստացել դեռ 1840 թ: Խորհրդա-յին տարիներին քաղաքը շարունակում էր զարգանալ, և արդեն՝ 1980-ական թվա կանների վերջին նրա բնակչությունը հասել էր 230 հազարի: Ստեղծվել էր բազմա ճյուղ արդյունաբերություն, որտեղ առաջատար էին տեքստիլ, սննդի և մեքենաշի նության ճյուղերը: Գործում էին բուհեր, գիտահետազոտական հիմնարկներ: Քա ղաքում ակտիվ էր նաև մշակութային կյանքը: Գյումրիի համար ողբերգական եղավ 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը, որի հետևանքով ավերվեցին և շարքից դուրս եկան քաղաքի գրեթե բոլոր գործարանները, դադարեց գործել քաղաքային տնտե սությունը: Աշխարհի տարբեր երկրներ անմիջականորեն մասնակցություն ցուցա բերեցին վերականգնման աշխատանքներին: Սակայն ԽՍՀՄ-ի փլուզումը անհնար դարձրեց վերականգնման ծրագրի իրականացումը և այն մնաց անավարտ: [24, էջ 13] Ընթացքի մեջ է Գյումրիի վերականգնումը, որը կատարվում է նաև բարերարնե-րի միջոցներով ու ջանքերով: Գյումրիում կանգնեցված է աշխարհահռչակ շան-սոնյե և մեծագույն հայ բարերար՝ Շառլ Ազնավուրի արձանը: Անգնահատելի է նրա

ցուցաբերած օգնությունը գյումրեցիներին և, ընդհանրապես, ամբողջ հայ ժողովը դին: 2013 թ. հունիսի 30-ին Գյումրին հռչակվեց ԱՊՀ մշակութային մայրաքա-ղաք, որը նշվեց մեծ տոնակատարությամբ՝ հեռանկարներ ստեղծելով քաղաքի սոցիալ տնտեսական և զբոսաշրջության զարգացման համար:

Շիրակի մարզի մյուս քաղաքներն են Արթիկը՝ 18.8 հզ. բնակչությամբ (գտնվում է մարզկենտրոնից 20 կմ հարավ-արևելք) և Մարալիկը (մարզկենտրոնից 27 կմ հարավ), որը քաղաքի կարգավիճակ է ստացել 1996 թ-ից, ունի՝ 5.5 հզ. բնակչութ-յուն: [2, էջ 14]

Խորհրդային տարիներին Շիրակի մարզն ունեցել է զարգացած տնտեսություն, գործել են 72 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց կողմից տարեկան թողարկվել է շուրջ 1 միլիարդ 300 միլիոն ռուբլու արտադրանք, արդյունաբերութ-յան ոլորտում աշխատել է մոտ 54 հզ. մարդ, որից միայն Գյումրիում՝ 38 հզ. մարդ: Մարզում զարգացած է եղել թեթև և սննդի արդյունաբերությունը, մեքենաշինութ յունը, սարքաշինությունը, հանքարդյունաբերությունը և շինարարական իրերի ար տադրությունը:

Կործանիչ երկրաշարժի հասցրած ծանր հարվածների հետևանքով ոչնչացվե-ցին մարզի արդյունաբերական կազմակերպությունների հիմնական միջոցների շուրջ 70%-ը, կտրուկ ընկան արտադրական հզորությունները և տարեցտարի ան-ընդմեջ նվազեց աշխատողների թվաքանակը: Կառուցված և շահագործման հանձ-նըված մի շարք խոշոր կազմակերպությունների աշխատանքը հետագայում ընդ-հատվեց ֆինանսական ռեսուրսների, արտադրության վերազինման և ժամանա-կակից տեխնոլոգիաների ներկրման համար անհրաժեշտ ներդրումների բացա-կայության և այլ պատճառներով: Անավարտ մնաց նաև սկսված շինարարությու-նը: Զուգահեռաբար ստեղծվեցին և գործեցին փոքր ու միջին նոր արտադրական ընկերություններ:

Մարզի տնտեսական ներուժին մեծ վնաս հասցրեց նաև իրացման շուկաների բա ցակայության, հումքի ներկրման դժվարությունների, սարքավորումների բարոյա ֆիզիկական մաշվածությանն և սեփականաշնորհման պատճառներով նախկինում հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր ձեռնարկությունների քայքայու-մը: Դրանց մի մասը ՀՀ Կառավարության որոշումներով լուծարվեց: Չմասնավո-րեցված ձեռնարկությունների հիմնական միջոցները արդյունավետ օգտագործելու նպատակով դրանցից մի քանիսի բազայի վրա ստեղծվեցին նոր փոքր ու միջին կա ոողություններ: Անցած ժամանակաշրջանում մարզում իրականացվող ինտենսիվ շինարարությունն առավել մեծ թափ հաղորդեց հանքարդյունաբերության ոլոր տին: Ծանրաբեռնվածությամբ աշխատեցին ոչ միայն գործող ձեռնարկությունն-ը-ը, այլև նոր ստեղծված շուրջ 20 ընկերություններ:

Տարեցտարի Շիրակի մարզի արդյունաբերության ոլորտում կատարվող ներ դրումների ծավալները մեծանում են: 2010-2013թթ. մասնավոր ներդրումներ են կա-

տարվել Գյումրու Տեխնոպարկի ստեղծման ծրագրով, Ախուրյանի տարածաշրջա նում շաքարի գործարանի կառուցման, ածիկի արտադրության „ Արմամաստ", Գյումրու „Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի", „Լենտեքս", „Նայթեքս", գարեջրի-ածիկի „Շիրակ", „Քարմշակմեքենա", „Մագնոն", Արթիկի „Ստեկլոմաշ" բաժնետիրական ընկերություններում, նաև „Հովբիլթ-Բրիք", „Գևորգ և Վահան", „Խայծ-իշխան", „Իգիթ", „Բանդիվանկաթ", „Վարդան-Անահիտ", „Օլանդա", „ Տիրա շեն", „Վահագն-Պարթև" սահմանափակ պատասխանատվությամբ և այլ ընկե րություններում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների նկատմամբ անընդհատ աճող հետաքր քրության և կատարված ներդրումների շնորհիվ Հայ Օգնության ֆոնդի կողմից Գյումրիում հիմնադրվեց և հաջողությամբ գործում է „ Տեղեկատվական տեխնոլո գիաների կենտրոնը", որի շրջանավարտներն աշխատում են հանրապետության համապատասխան ընկերություններում: Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը աջակցելու, ինովացիոն տեխնոլոգիաները գիտության և նորարա րության արդյունքները տնտեսության մեջ ներդնելու, համալսարանական համա կարգը բիզնեսի հետ կապելու նպատակով Հ Հ կառավարությունը ևս աջակցում է Գյումրու Տեխնոպարկի ստեղծմանը, որը մեծապես կնպաստի մարզի և նրա տա րածաշրջանների զարգացմանը՝ հնարավորություն ստեղծելով նոր բիզնես գաղա փարների և աջակցություն ապահովելով նորաստեղծ փոքր ու միջին կազմակեր պությունների:

Համաշխարհային բանկի միջոցների հաշվին անցած տարիներին մարզում կա ռուցված „Հայ էլեկտրակոնդեսատոր", „Անալիտ սարք" և „Էլ սարք" բաժնետիրա կան ընկերությունների արտադրական նոր մասնաշենքերից այսօր միայն „Էլ սարք" գործարարանի նորակառույց արտադրական մասնաշենքում է գործում „Գե վորգ և Վահան" ՍՊԸ-ն: Իսկ „Դ-Լինկ Ինթերնեշնլ" հանրահայտ ընկերության կող- մից ներկայումս Գյումրիում կառուցվում է հետազոտությունների կենտրոն, որի կառուցման համար կներդրվի շուրջ 8.5 մլն. ԱՄՆ դոլար և կստեղծվի 50 աշխա տատեղ:

ՀՀ Շիրակի մարզում ստեղծվել և գործում է „Հայաստանի փոքր և միջին ձեռնար կատիրության զարգացման ազգային կենտրոն" հիմնադրամի Շիրակի մասնա ճյուղը: Մարզում ներկայումս արտադրանք են թողարկում շուրջ 100 տնտեսա վարող սուբյեկտներ: Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քա նակում գերակշռում են գերփոքր և փոքր ընկերությունները, որոնց տեսակա-ռար կշիռը կազմում է մոտ 76 %: Մարզում գործող արդյունաբերական ձեռնար կությունների կողմից 2012 թ. թողարկվել է շուրջ 40.7 միլիարդ դրամի արտադ րանք:

Մարզի բոլոր նորաստեղծ, ինչպես նաև գործող որոշ փոքր և միջին ձեռնար կություններում վերջին տարիներին կատարված ներդրումների շնորհիվ հնա ռավոր եղավ պահպանել աշխատատեղերը, բարելավել արտադրանքի որակն ու

արտաքին տեսքը, բարձրացնել մրցունակությունը, ընդլայնել արտադրական հզո
րությունները: Այժմ առաջնահերթ է դարձել վերսկսելու կադրերի պատրաստման
գործընթացը, առկա է հմուտ և որակյալ աշխատուժի կարիքը: Առանձին մասնա
գիտությունների գծով (փականագործներ, խառատներ, ֆրեզերագործներ, ենթա
վարպետներ, զոդողներ, հյուսներ և այլն) բարձրորակ կադրերի կարիքը շատ մեծ
է: Հեռանկարային է բարձր տեխնոլոգիաների, ինչպես նաև սպասարկման ոլորտի
ընկերությունների համար որակյալ աշխատուժի պատրաստումը: Շիրակի մարզի
գյուղատնտեսության ուղղություններն են բուսաբուծությունը և
անասնապահությունը: Մարզում վարելահողերի, արոտների և խոտհարքների նը
պատակային օգտագործման մակարդակը բարձր է, իսկ վերջին 5 տարիների ըն
թացքում ավելացել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություն
ները: Այստեղ աճեցնում են նաև կարտոֆիլ, բանջարեղեն, տեխնիկական և այլ
մշակաբույսեր:

Մարզի անասնաբուծական հիմնական ուղղություններն են՝ տավարաբուծութ
յունը, ոչխարաբուծությունը, մեղվաբուծությունը: Մարզում գործում են անասնա
պահական մթերքների վերամշակման արտադրություն՝ կաթնամթերքի և մսամը
թերքի: Գործում են կաթի վերամշակման բազմաթիվ մասնագիտացված կազմա
կերպություններ:

Չնայած , որ Շիրակի մարզում չափազանց ցածր է ապրանքների և ծառայութ
յունների պահանջարկը, այնուամենայնիվ վերջին տարիներին անընդմեջ աճում
են առևտրի շրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծա
վալները: 2012 թ. առևտրի շրջանառության ծավալը ընթացիկ գներով կազմել է
շուրջ 25.5 մլրդ. դրամ, իսկ բնակչությանը մատուցված ծառայությունների ծա
վալը՝ շուրջ 18.5 մլրդ. դրամ: [41, sirak.mtad.am]

Ինչպես ցանկացած երկրի և տարածաշրջանի համար, այնպես էլ ՀՀ Շիրակի
մարզի տնտեսական և սոցիալական զարգացման գործում առաջնահերթ տեղն այ-
սօր պատկանում է փոքր և միջին ձեռնարկատիրությանը: Կարևորելով վերջիննե-
րիս դերը մարզի տնտեսության վերականգնման և զարգացման, նոր աշխատա-
տեղերի ստեղծման, ինչպես նաև միջին խավի ձևավորման գործում, հարկ է նշել,
որ մեր հանրապետությունում իրականացվող բարեփոխումները որոշակի ազդե-
ցություն են ունեցել նաև ՀՀ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի
վրա: Վերոհիշյալ մարզի ընդհանուր աշխարհագրական բնութագրից կարելի է
հետե վություն անել, որ Շիրակը, չնայած իր դաժան բնակլիմայական
պայմանների և լանդշաֆտների միօրինակության եղել և մնում է ՀՀ
հացահատիկային կուլտու րաների, կարտեֆիլի և շաքարի ճակնդեղի մշակության
գլխավոր շրջանը:Իսկ ալպ-յան մարգագետիններն, էլ հյութալի արոտավայրեր են
արոտային անասնապա-հության և մեղվաբուծության զարգացման համար:
Մարզի տարածքը հարուստ լի-նելով շինանյութերով զարգացնում է
լեռնահանքային արտադրություն: Տրանս-

պորտաաշխարհագրական բարենպաստ դիրքը ևս մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող կարևոր գործոն է համարվում:

ՈՒստի նման աշխարհագրական բարենպաստ նախադրյալներով ունեցող մար-զը մոտ ապագայում՝ հմուտ տնտեսավարման պայմաններում կարող է առաջըն-թաց ապահովել սոցիալ-տնտեսական ոլորտում և ստեղծել բազմաթիվ նոր աշխա տատեղեր բնակչության համար:

ԳԼՈՒԽ 2.
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՈՐՊԵՍ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

2.1 Կրթական ավանդույթների առկայությունը

Հին ժամանակներում , երբ չկային ժամանակակից կրթական համակարգին հա մապատասխան հաստատություններ (դպրոցներ, գիտակրթական կենտրոններ և այլն), կրթական և գիտական գործունեություն ծավալում էին միայն հոգևոր, կրո նական կենտրոնները՝ (վանական համալիրներ) իրենց ծխական դպրոցներով: Նը ման հաստատություններում կրթվում և հետո գիտական գործունեություն էին ծա վալում այն ժամանակների հայ անվանի մատենագիրները (Մ. Խորենացի, Եղիշե, Կորյուն, Ա. Շիրակացի և այլք), երաժշտագետները (Կոմիտաս), կրոնական թեմի առաջնորդներ և այլք: Ուստի նման պայմանները Շիրակի մարզի կրթական ա վանդույթները ներկայացնելիս հարկի է բնութագրել և ներկայացնել մի շարք վա նական համալիրներ, որոնք իրենց ժամանակին մեծ գիտակրթական գործունեութ-յուն են ծավալել: Մարզում, այսօր էլ նմանատիպ գործունեություն է ծավալում Հա-ռիճի վանական համալիրը:

Շիրակի մարզում կրթամշակութային ավանդույթների հիմքը դրվել է դեռևս Բագ րատունիների հայոց պետականության վերականգնման տարիներին: Այդ ժամա նակ Շիրակի գավառը մի շարք տարածքների հետ պատկանում էր Պահլավու նիների սպարապետական տոհմին: Նրանց գահակալության տարիներին և դրա-նից

հետո էլ Շիրակի գավառի տարածքում կառուցվել են մի շարք հոգևոր-մշա-կութային կենտրոններ, որոնցից մի քանիսը շատ վաղուց նաև գիտակրթական գործունեություն են ծավալել:

Շիրակի մարզում կրթական ավանդույթները պահպանվում են նաև մեր օրե րում, որի վառ ապացույցներից են տեղում պահպանված մի շարք վանական հա մալիրներ և բերդ-ամրոցներ (ուրարտական կառույցներ): Այսօր էլ դրանցից մի քանիսը մշակութային արժեքների տեսքով զբոսաշրջության զարգացման հիմ նաքարն են հանդիսանում: [Տես՝ քարտեզ 2]

Իսկ Հառիճի վանական համալիրը մեր օրերում, ինչպես Էջմիածնի Գևորգյան ճե մարանը, կրթական գործունեություն է ծավալում՝ դաստիարակելով և կրթելով ա պագա հոգևորականների:

IX-XI դարերում Շիրակի գավառում հայտի խոշոր ճարտարապետական կա ռույցներից էին Անին, Տեկորի, Լմբատավանքի, Երերույքի, Հոռոմոսի, Հառիճի, Մա րմաշենի վանական համալիրները և այլ պատմամշակութային կոթողներ:Դրանցից մի

քանիսը այսօր գտնվում են Շիրակի մարզի տարածքում՝ կիսաավեր կամ բավա-կանին լավ պահպանված վիճակում



2. Շիրակի մարզի պատմամշակութային կոթողների և ռեկրեացիոն ռեսուրսների քարտեզ

Հոռոմոսի վանքը հայկական միջնադարյան վանական համալիր է՝ կառուցված X դարի առաջին կեսին Աբաս Բագրատունու օրոք, Բյուզանդիայից Հայաստան ա պաստանած հայ վանականների կողմից (այստեղից էլ անվանումը՝ Հոռոմների վանք): Վանական համալիրը գտնվում է Անիից հյուսիս-արևելք՝ Ախուրյան գետի աջ ափին (այժմ՝ Թուրքիայի տարածքում): Անի տանող ճանապարհին կանգուն են մի ինքնատիպ շինության „հաղթական կամար" համարվող դռան (Ղոշեք) գմբե-թավոր զույգ աշտարակները, որի պատճառով վանքը կոչվել է նաև Ղոշավանք: Հոռոմոսի վանքը եղել է Բագրատունիների տոհմական հանգստարան, թագա-վորների և իշխանների դամբարանավայր, նաև, իջևանատուն՝ ճանապարհորդնե-րի և առևտրական քարավանների համար: [Տես՝ նկար 1], [6, էջ 164]

Մարմաշենի վանական համալիրը մեր օրերում Շիրակի մարզի բավականին լավ պահպանված հուշարձաններից է: Նրա հոգևոր և աշխարհիկ զարթոնքը եղել է հենց X դարում, երբ հայոց սպարապետ Վահրամ Պահլավունին շինարարական

աշխույժ գործունեություն էր ծավալում: Վանական համալիրը մեծապես նպաստել է հայ հոգեվոր-կրթական կյանքի զարգացմանը:

Մարմաշենի վանական համալիրը գտնվում է Շիրակի մարզի Մարմաշեն գյու-ղից մոտ 2 կմ հյուսիս-արևմուտք, Ախուրյան գետի ձախ ափին (այժմ՝ ՀՀ տարածքում): Վանքի գլխավոր՝ Կաթողիկե եկեղեցին, ըստ հարավային պատի արձանագրության, կառուցել է իշխան Վահրամ Պահլավունին՝ 988-1029թթ-ին: Սելջուկյան արշավանքներից վանական համալիրը զգալիորեն ավերվել է: 1225թ-ին Վահրամ Պահլավունու թոռներ Գրիգոր արքեպիսկոպոսը և նրա եղբայր Ղարիբը վերանորո-գել են Կաթողիկեն: Մարմաշենի վանական համալիրի Սբ. Կաթողիկե եկեղեցին հայկական ճարտարապետության Բագրատունիների ժամանակաշրջանի լավագույն կառույցներից է:

Մարմաշենի վանական համալիրը միջնադարում եղել է Հայաստանի կրոնական և մշակութային նշանավոր կենտրոն՝ հետագայում վերածվելով մի գյուղական եկեղեցու: Այն այսօր, հայկական հոգևոր և ճարտարապետության արժեքավոր համալիրներից է: [Տես՝ նկար 2]

Հայաստանում պահպանված եկեղեցական ամենահին կառույցներից է, Երերույքի եկեղեցին, որը կառուցվել է V դարում: Եկեղեցին գտնվում է Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի Անիպեմզա ավանում, Երևան-Գյումրի երկաթուղու ձախ կողմում պեմզայի հայտնի հանքավայրի մոտ ընկած տափարակ վայրում: Երերույքի եկեղեցին սյունազարդ, քառանկյունի մոնումենտալ մի կառուցվածք է, որի պա-տերը շարված են տաշած կարմիր և գորշ տուֆով, իսկ պատերի վրա կան արձա նագրություններ: Եկեղեցին քանդակներ գրեթե չունի, իսկ ներսի պատերը շարված են սրբատաշ քարերով: [18, էջ 242]

Հառիճավանքը հնագույն միջնադարյան հայկական վանքերից է, որի ամենա-հին շինությունը՝ Սբ. Գրիգոր եկեղեցին, կառուցվել է VII դարում: Վանքը գտնվում է Արթիկի տարածաշրջանի Հառիճ գյուղում, Արթիկ քաղաքից մոտ 3 կմ հարավ արևելք: Վանքին կից կան XIII դարում կառուցված երկհարկանի աղոթարաններ: Վանքի գլխավոր եկեղեցին կառուցվել է Զաքարե և Իվանե եղբայրների հրամանով 1201 թ-ին, որը խաչաձև գմբեթավոր մեծաչափ կառույց է: [Տես՝ նկար 3]



Նկար 3. Հառիճավանք

Հառիճավանքը միջնադարյան ճարտարապետության գոհարներից է՝ պարուրված նուրբ զարդաքանդակներով: Շինությունը վեհաշուք է իր պարզությամբ և կառուցման կատարելությամբ: Դեռևս VII դարից սկսած վանքը եղել է նաև գիտակրթական կենտրոն: Ալփասլանի արշավանքների ժամանակ՝ XI դարում, վանքը կործանվել է, որը կրկին վերականգնվել է 1236 թ-ին: 1856-57 թթ-ին այնտեղ բացվել է կիսագիշերօթիկ դպրոց, որը 1872 թ-ին ունեցել է 63 աշակերտ, որոնցից 32-ը՝ գիշերօթիկ, 31-ը՝ երթևեկ: 1888թ-ին այն դարձել է երկդասյա դպրոց՝ 5 բաժանմունքով: 1896 թ-ին ցարական կառավարությունը փակել է դպրոցը, որը հետո վերաբացվել է 10 տարի անց: 1907 թ-ին դպրոցը դարձել է երկսեռ ծխական և ունեցել է 109 աշակերտ և 5 ուսուցիչ: 1913-14 ուս. տարում դպրոցը դարձել է վեցամյա, իսկ հետագայում՝ միջնակարգ: Վանքում գործող հայտնի դպրոցում՝ 1887-1889 թթ., սովորել է նաև հայտնի բանաստեղծ՝ Ավետիք Իսահակյանը: [21, էջ 243]

Հառիճավանքը եղել է նաև գրչության կենտրոն, որտեղ պահվում էր հնագույն մի ձեռագիր՝„Ավետարանը", որը տեղի Մարգարեի գրչին էր պատկանում: Ավետարանի միայն մի թերթն է պահպանված վիճակում այսօր հասել մեզ: Հաջորդ ձեռագիրը գրվել է Աբասի որդի Գրիգորի առաջնորդության ժամանակ՝ 1219 թ-ին, երբ գրչության արվեստը ծաղկում էր Հայաստանի դպրոցներում: [3, էջ 158] Այսօր էլ Հառիճավանքում կրթական ավանդույթները պահպանված է, և տեղում գործում է հոգևոր դպրոց, որտեղ դաստիարակվում և կրթվում են ապագա հոգևոր ականներ: Ներկայումս բացի Հառիճի հոգևորականների դպրոցից, այդպիսի կրթահամալիրներ կան նաև Վաղարշապատում (Գևորգյան ճեմարան) և Սևանավանքում:

Շիրակի մարզի կրթական ավանդույթների պահպանման գործում յուրահատուկ դերակատարություն ունի Գյումրին՝ իր բազում եկեղեցիներով: Այդտեղ քաղաքի պատմության ընթացքում կառուցվել են 16 եկեղեցիներ, որից 5-ը եղել են ռուսական զորամասային, մեկը՝ հայ կաթոլիկ, մյուսն էլ՝ հունական: Միայն Գյումրիում

գործել են 7 եկեղեցիներ: Այսեղ տեղին է հիշել աշուղ Ջիվանու խոսքերը.

Մի քաղաք տեսա ժամի սիրահար,
Բնակիչները՝ հայ, մոտ քսան հազար,
Իրենք հաց չունին ուտելու համար,
Յոթ հատ վանք են շինել, խելքի՛ աշեցեք...

Գյումրիում հիշատակված առաջին եկեղեցին է եղել Դպրեվանքը, որը հայ ճար տարապետական ոսկեդարի՝ VII դարի կառույց է: Այն առաջին եկեղեցիներից է եղել, որը ճարտարապետական կառուցվածքով բազիլիկ գմբեթավորից անցել է կենտրոնագմբեթ խաչաձև եկեղեցուն: Եկեղեցում է պահվել Աստվածածնի նշա նավոր խաչը, որով բուժվել է Վրաց թագավոր Դեմետրե I-ի կինը, այնուհետև Սբ. Խաչը տեղափոխել են Վրաստանի Վարձիա վանքը: Եկեղեցին քանդվել է ռուսա կան ամրոցի կառուցման պատճառով: [4, էջ 858]

Գյումրիում եկեղեցաշինությունը մեծ թափ է առել հատկապես XIX դարում, ո որոնց մեծ մասը մեզ է հասել պահպանված վիճակում: Քաղաքի գլխավոր եկեղե-ցին Սուրբ Յոթ Վերքն է, որը կառուցվել է 1874-1886 թթ և գտնվում է քաղաքի Կենտ րոնական՝ այժմ Վարդանանց հրապարակում: Եկեղեցու իրական անունը Սուրբ Աստվածածին է, բայց այն վերանվանվել է Յոթ Վերք՝ ի պատիվ Մարիամ Աստվա ծածնի „Յեօթն խոցից" սրբապատկերի, որն ըստ Ղ. Ալիշանի՝ նկարել է Ղուկաս Ա վետարանիչը և Հայաստան է բերել Գրիգոր Մագիստրոսը: Նկարում պատկերված է Սուրբ Մարիամն իր յոթ վերքերով: Եկեղեցին կառուցված է սև քարից, որի տե-ղում նախկինում եղել է փայտե մատուռ, որտեղ և ժամանակին գտնվել էր վերը նշված նկարը: Եկեղեցին գործել է անգամ խորհրդային տարիներին, երբ Հայաս-տանում փակվել էին բոլոր եկեղեցիները, բացի երկուսից (երկրորդը՝ Էջմիածնի Մայր Տաճարն է): 1988 թ-ի ավերիչ երկրաշարժից Սուրբ Յոթ Վերքը քիչ է տուժել: Եկեղեցու երկու փոքր գմբեթները ամբողջությամբ պոկվել և ընկել են վար, որոնք հիմա դրված են եկեղեցու բակում: Ամեն տարի եկեղեցում պատարագ է լինում եր-կրաշարժի զոհերի հիշատակի և հոգու հանգստության համար: Վերջերս հերթա-կան ելույթով է այնտեղ հանդես եկել հայտնի երգչուհի Հասմիկ Պապյանը, որը բնակվում է Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում: [Տես՝ նկար 4]

Շիրակի մարզի մյուս տարածաշրջաններում ևս առկա են մի շարք հոգևոր թե-մի վանական կառույցներ, որոնք մյուսներից պակաս կարևոր դեր ու նշանակութ-յուն չեն ունեցել մարզի գիտակրթական և մշակութային ավանդույթների զարգաց-ման, տարածման ու պահպանման գործում: [Տես՝ հավելված 1]

[37, http://shirak.mtad.am/u-files/gyumri.pdf.]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Մագիստրական ատենախոսության կատարումից հանգել եմ հետևյալ եզրակա ցությունների, ունեմ նաև առաջարկություններ.

1.ՀՀ վարչական տարածքային միավորների մեջ Շիրակի մարզն իրավամբ առ անձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն իր աշխարհագրական առանձնահատ կություններով, այլև արհեստներով ու արվեստներով, ժողովրդական երգերով ու պարեղանակներով, մարզական ավանդույթներով, մշակութային բազմաշերտուութ յամբ, ազգային ավանդույթների և մշակութային բաղադրիչների պահպանվածութ յամբ, լեզվամշակութային ինքնատիպ դրսևորումներով, գյումրեցիների և շիրակ ցիների յուրահատուկ հումորով և սուր խոսքով:

2.Պատշաճ մակարդակով առանձնանում է մարզի գիտակրթական ներուժը: Նրա դերը շատ մեծ է եղել ինչպես մարզի, այնպես էլ հանրապետության սոցիալ-տնտե սական զարգացման գործում: Ճիշտ է աղետալի երկրաշարժը, արտագաղթը բացա սական ազդեցություն ունեցան այդ ներուժի կարողության և պահպանման վրա, այնուհանդերձ Շիրակ աշխարհից են հանրապետությունում և նրա սահմաններից շատ հեռու ճանաչված հայտնի գիտնականներ, այդ թվում 30 ակադեմիկոսներ, ով քեր աշխատել և աշխատում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտա հետազոտական ինստիտուտներում, մարզի և մայրաքաղաքի տարբեր բուհերում:
Նրանք վիթխարի ներդրում ունեն ճշգրիտ, բնական և հումանիտար գիտությունն-ի բնագավառներում:

3.Խիստ յուրահատուկ և ինքնատիպ է Շիրակ աշխարհի մշակույթը: Այն աչքի է ընկնում անկրկնելիությամբ, բազմաշերտությամբ,կոլորիտով: Մարզի և հանրապե տության սոցիալ-տնտեսական զարգացման գործում իրենց արժանի տեղն ունեն ճանաչված նկարիչները, երգիչները, գուսանները, կոմպոզիտորները, Եվրոպայի և աշխարհի օլիմպիական խաղերի չեմպիոնները, գրողներն ու բանաստեղծները, արհեստավորները: Համեստորեն նշենք, որ Գյումրին ոչ միայն Հայաստանի հյուսի սային մայրաքաղաքն է, այլև սպորտի, արհեստների ու արվեստների, հումորի և հյուրասիրության մայրաքաղաքը:

Առաջարկություններ՝

1.Պետության ֆինանսական աջակցություն

2.Սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացում

3.Գիտակրթական, գիտամշակութային և գյուղատնտեսական նոր ռազմավա- րական ծրագրերի մշակում և իրականացում

4.Մարզային մոնիթորինգների անցկացում և գիտատար նոր արտադրություն- ների կազմակերպում

5.Գիտական կանխատեսում և սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ռազմավարական պլանների մշակում

6. ՏՀՏ ոլորտի ընդլայնում և զարգացում

7.Միջազգային դոնոր կազմակերպությունների կապիտալի ներդրում

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աբրահամյան Վ. Ա. , Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում, Եր., 1971, 33 էջ

2.Ազատյան Վ., Լենինական, Երևան, 1988, 14 էջ

3.Ալիշան Ղ., Շիրակ , Վենետիկ, 1881, 158 էջ

4.Այվազյան Հ., Հայաստան Հանրագիտարան, Հայկ. Հանրագիտ. հրատ., 2012, 858 էջ 5.Ասլանյան Ա.Ա., Բաղդասարյան Ա. Բ., Դուլյան Ս. Մ., Վալեսյան Լ. Հ., Հայաստան, Երևան, Հայաստան հրատ., 1969, 319 էջ

6. Ավետիսյան Կ., Ավետիսյան Ա., Հայրենագիտական էտյուդներ,Երևան,1979,164 էջ 7.Բաղդասարյան-Թափալցյան Ս.,Մշո բարբառը,Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, 277 էջ 8.Բաղդասարյան Ա.Բ.,ԱբրահամյանԳ.Ս., Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն,Երևան, 1971, 317 էջ